Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 346 - Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԺՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել բարդ առողջական խնդիրներ ունեցող մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքներին՝ վիրահատության և բուժման համար անհրաժեշտ դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման հարցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպություն (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Օբեռհաուզեն, Լանտեռշթռասե 21, Դինսլակեն):
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն (քաղաք Երևան, Տիգրան Մեծի պողոտա 51 N 62, ՀՎՀՀ՝ 02507911)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ առողջապահության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	48,220,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Բարդ առողջական խնդիրներ ունեցող մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքներ, որոնց ընտրությունը իրականացվում է ըստ անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, որի համար կարող է հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների կողմից տրված տեղեկանքը կամ «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացված զրույցի կամ ընտանիք այցի եզրակացությունը՝ համաձայն

		«Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության պայմանավորվածության:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 1-ից մինչև 2031 թվականի մայիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) երեխաների վիրահատության և բուժման համար անհրաժեշտ դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման կազմակերպում՝ 44,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 1-ից մինչև 2031 թվականի մայիսի 31-ը. 2) կազմակերպական միջոցառումներ՝ 4,220,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 1-ից մինչև 2031 թվականի մայիսի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) երեխաների վիրահատության և բուժման համար անհրաժեշտ դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում կամ ներմուծում՝ 44,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 2) հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 140,000. 3) հեռահաղորդակցման ծառայությունների ձեռքբերում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 144,000 դրամ. 4) էլեկտրական էներգիայի ծառայությունների ձեռքբերում՝ 2,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 480, 000 դրամ. 5) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 80,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը կազմելու են 4,220,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր բյուջեի 9,1 %-ը՝ 1) հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 140,000. 2) հեռահաղորդակցման ծառայությունների ձեռքբերում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 144,000 դրամ. 3) էլեկտրական էներգիայի ծառայությունների ձեռքբերում՝ 2,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 480, 000 դրամ.

		4) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան 80,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ